

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆԻ

2(10)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 2(10)

ԵՐԵՎԱՆ 2022

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ*

Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ.*, *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*
Հարություն Մարության, *պ. գ. դ.*
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ.*, *պրոֆեսոր*
Հռիփսիմե Պիկիչյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*
Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*
Համո Սուքիասյան, *պ. գ. թ.*, *դոցենտ*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*)
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*)
Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ Բրիտանիա*)

ISSN 1829-0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արման Նալբանդյան

ՇԻԿԱՀՈՂԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱ ԵԿԵՂԵՑՈՒ
ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 8

Կարեն Թոխաթյան

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՑԱԽ ԵՎ ՍՅՈՒՆԻՔ ԱՇԽԱՐՀՆԵՐԻ
ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ 18

Նժդեհ Երանյան, Համլետ Պետրոսյան

ՏՈՂԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 31

Варданесова Татьяна

КОЛЛЕКЦИЯ СРЕДНЕВЕКОВОГО СТЕКЛА
ИЗ РАСКОПОК Г. ТИГРАНАКЕРТ В АРЦАХЕ 41

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գոռ Ղազարյան

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ 1920 – 1921 ԹԹ. 46

Մայա Գրիգորյան

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ
20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 58

Միրանույշ Առաքելյան

ԱՐՑԱԽԻ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐԸ
«СБОРНИК МАТЕРИАЛОВ ДЛЯ ОПИСАНИЯ МЕСТНОСТЕЙ И ПЛЕМЕН
КАВКАЗА» (СМОМПК 1881-1915) ՌՈՒՍԱԼԵԶՈՒ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԷՋԵՐՈՒՄ 68

Վանիկ Վիրաբյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ 1920 Թ.
ԱՊՐԻԼԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՎԵՀԱԺՈՂՈՎՈՒՄ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ
ԳՈՐԾՈՂ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ 77

Միհեր Քումունց

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ «ԴԱՎԻԹ ԲԵԿ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ՂԱՓԱՆՑՈՑ»-Ի ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 93

ԴՐԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վեռա Բոյան
ՍՅՈՒՆԻՔԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ
(ԸՍՏ ԴՐԱՄԱԿԱՆ ԳԱՆՁԵՐԻ) 108

ԱՂԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լիլիա Ավանեսյան
ՇՈՒՇԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԱԶԻ ՆՄՈՒՇՆԵՐ
(19-ՐԴ–20-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 118

Կարինե Բազեյան
ԱՐՑԱԽԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋ 129

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Անուշ Սաֆարյան
ԱՐՑԱԽԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԱՉՔԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ 138

Նարինե Շամամյան
ՌԱԶՄԱՊԱՐԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏՈՒՄ
(ՊԱՏՄԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ) 145

Արմինե Շահբազյան
ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՍՅՈՒՆԻՔԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ ԿԻՆՈԱՐՎԵՍՏՈՒՄ 155

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մեդա Գալստյան
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ 168

Համլետ Պետրոսյան
ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ
ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈԴԻՍԱԿԱՆԸ 183

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ 189

Համլետ Պետրոսյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Երևանի պետական համալսարան
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
hpetrosy@gmail.com

ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԸ*

Հիմնաբառեր. Հայ-ադրբեջանական հակամարտություն, Արցախի Տիգրանակերտ, պեղումներ, հանրահռչակում, թանգարան, ինքնություն, մշակութային ժառանգություն, մշակութային քաղաքականություն, 44-օրյա պատերազմ:

Արցախի Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունը հայ մշակութային ժառանգության հայտնաբերմանը, հետազոտությանն ու հանրահռչակմանն ուղղված վերջին տասնամյակի ամենահաջող ձեռնարկներից է: Պեղումներից չորս տարի անց՝ 2010 թ. մայիսին, հուշարձանի տարածքում գտնվող ուշմիջնադարյան ամրոցում բացվել է Տիգրանակերտի հնագիտական թանգարանը: Այն ոչ միայն այցելուներին էր ներկայացնում քաղաքի հարուստ պեղածո մշակույթը, այլև դարձել էր արցախյան և համահայկական մասշտաբով անցկացվող բազմաթիվ մշակութային միջոցառումների կենտրոն: Հոդվածում ներկայացվում են մշակութային այս նախաձեռնության նախապատմությունը, ընթացքը, Տիգրանակերտի հնագիտական թանգարանի ցուցադրությունը, գործունեությունը: Քննվում են միջազգայնորեն չճանաչված Արցախի Հանրապետությունում մշակութային ժառանգության հետազոտության բարդություններն ու հեռանկարները, թանգարանի և հավաքածուների ճակատագիրը 44-օրյա պատերազմից հետո:

Նախապատմությունը: Տիգրանակերտի հնագիտական հետազոտությունը հայ մշակութային ժառանգության հայտնաբերման, հետազոտության, հանրահռչակման և այն ներկա մշակութային գործընթացի մաս դարձնելու վերջին տարիների ամենահաջող ձեռնարկներից է: Մինչև հնագիտական հետազոտությունները Լեռնային Ղարաբաղի միջազգայնորեն չճանաչված Հանրապետությունում, որն իր անկախությունը հռչակել է անցած դարի իննսունականների սկզբին, հայ-ադրբեջանական պատերազմից հետո ազատագրված տարածքներում, որոնք առնվազն մ.թ.ա. 1-ին դարից բնակեցված են եղել հայերով, այս քաղաքի մասին հայտնի էին միայն առասպելական պատմություններ: Քաղաքը հայտնաբերելու նախաձեռնությունը պատկանում էր մի քանի մտավորականների՝ ցույց տալու հայկական և միջազգային գիտական և քաղաքական շրջանակներին, որ ադրբեջանական «պատմական էքսկուրսներն» այն մասին, թե հայերն Արցախ են եկել ընդամենը 19-րդ դարում, զուտ քաղաքական առասպել է: Չնայած մատենագրական որոշ տեղեկություններին և 18–19-րդ դարի որոշ հեղինակների հիշատակու-

* Ստացվել է 25.07.2022 թ., ընդունվել է տպագրության 18.11.2022 թ.:

թյուններին, թե Շուշիից մոտ 50 կմ հյուսիս-արևելք, Աղդամ քաղաքից մոտ 8 կմ հուսիս-արևմուտք, Արքայական (Շահբուլաղ) կոչվող հորդ աղբյուրների մերձակայքում պահպանվել են մ.թ.ա. 1-ին դարում Հայաստանի արքա Տիգրան Մեծի (մ.թ.ա. 95–55թթ.) կողմից կառուցված քաղաքի մնացորդները, տեղում տեսանելի էին միայն 18-րդ դարից ոչ վաղ երկու շինություններ՝ ամրոցը և բաց սյունասրահով մզկիթը: 2005թ. այն վայրում, որտեղ 19-րդ դարի ճանապարհորդները տեղադրում էին Տիգրանակերտը, մեր արշավախմբի կողմից վավերացվեցին անտիկ ընդարձակ բնակավայրի հետքեր՝ ի դեմս մոտ 200 մ ձգվող պարսպի ժայռափոր հիմքերի և անտիկ գունազարդ խեցեղենի զգալի կուտակումների, ինչն էլ հիմք հանդիսացավ այստեղ ընդարձակ պեղումների նախաձեռնմանը:

Պեղումները: Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախմբի կողմից 2006–2020թթ. իրականացրած պեղումները երևան են բերել մ.թ.ա. 1-ին դարի սկզբներին կառուցված և մինչև 13-րդ դարի վերջերը գոյատևած ավելի քան 70 հա տարածք զբաղեցնող, սպիտակ կրաքարով կառուցված ընդարձակ քաղաքի մնացորդները. քաղաքի անտիկ Ամրացված թաղամասի (նկ. 1) Միջնաբերդի վերին հատվածը, Միջնաբերդը թաղամասից բաժանող 83 մ երկարություն ունեցող պարիսպ-հենապատը, նույն թաղամասի հարավային պարիսպների մոտ 450 մ ձգվող ժայռափոր հիմքերը, հյուսիսային պարիսպների մինչև 5 մ բարձրություն ունեցող և մոտ 430 մ ձգվող հատվածը, հարավային պարսպի նորահայտ մոտ 40 մ հատվածը, Կենտրոնական թաղամասի վաղքրիստոնեական հրապարակը (նկ. 2)՝ զույգ եկեղեցիներով, փոքր եկեղեցուն ներկառուցված մասունքարանով, խաչակիր մոնումենտալ կոթողի մնացորդներով, վաղքրիստոնեական տապանաբակով հանդերձ: Հայտնաբերվել և պեղվել են քաղաքի Անտիկ առաջին թաղամասը, Ժայռափոր հնձանը, Վաղքրիստոնեական դամբարանադաշտի մի հատվածը, Արքայական աղբյուրներին կից ջրավազանը: Մասնակիորեն պեղվել են անտիկ կարասային դամբարանադաշտերից մեկը (Արևելյան դամբարանադաշտ, նկ. 3), Տիգրանակերտի մերձակայքում գտնվող ժայռափոր պաշտամունքային համալիրն ու ժայռափոր ջրանցքը (նկ. 4), Ցիցսարի մասունքարանն ու եկեղեցին (նկ. 5), 19-րդ դարում կառուցված Փոստային կայանի մնացորդները, հետազոտվել են շրջակայքի մարդակերպ կոթողները, Գյավուրկալա վաղմիջնադարյան բնակատեղին: Հատուկ պիտի նշել, որ հետազոտության ֆինանսավորումն ապահովում էին ԼՂՀ իշխանությունները: Կարելի է հավաստել, որ արդյունքում Տիգրանակերտն այսօր տարածաշրջանի ամենադիտարժան հնագիտական հուշարձանն է և Արցախի անկախության գիտական և մշակութային էական նվաճումներից մեկը:

Հանրահռչակումը: Տիգրանակերտի պեղումներն սկսելու առաջին իսկ օրից արդյունքները լայնորեն ներկայացվել են գիտական և հասարակական լսարանին. մոտ մեկ տասնյակ ցուցահանդեսների կազմակերպում Արցախում, Հայաստանում, մեկ անգամ Շվեյցարիայում, հրատարակություններ, այդ թվում՝ ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով, ինտերնետային կայքի ստեղծում (http://

tigranakert.am), ֆեյսբուքյան էջի ստեղծում (ttps://www.facebook.com/pages/Tigranakert/108472209234833), ֆիլմերի նկարահանում, հեռուստա-ռադիո մի քանի տասնյակ հաղորդումներ, մշակութային միջոցառումների կազմակերպում: Արդյունքում Տիգրանակերտը մինչև 44-օրյա պատերազմն ամենաշատ այցելվող, ինտերնետում լայնորեն ու մանրամասնորեն ներկայացված, հանրությանն առավել քաջածանոթ հուշարձանն էր Արցախում:

Թանգարանը: Տիգրանակերտի հանրահռչակմանն ուղղված նախաձեռնությունների շարքում կարևոր քայլերից էր Տիգրանակերտի հնագիտական թանգարանի ստեղծումը հենց հուշարձանի տարածքում: Արցախի կառավարությանն առընթեր Ջբոսաշրջության վարչության ֆինանսավորմամբ մեկ տարվա ընթացքում վերանորոգվել է հուշարձանի տարածքում գտնվող 18-րդ դարի ամրոցը (նկ. 6), որի ներքնաբակի պարագծով ձգվող սենյակների մի մասն էլ վեր է ածվել թանգարանային ցուցասրահների: Տիգրանակերտի թանգարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 2010 թ. մայիսի 30-ին, բացմանը մասնակցում էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, վարչապետ Արայիկ Հարությունյանը (նկ. 7), թանգարանն օծեց Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Արցախի և Հայաստանի տարբեր վայրերից Տիգրանակերտ էին ժամանել հազարավոր մարդիկ, այն իսկական ժողովրդական տոն էր՝ բեմադրություններով ու համերգներով, ժողովրդական արհեստների և արհեստագործական իրերի ցուցադրություն-վաճառքով, արցախյան համեղ խորտիկների և խմիչքների համտեսումով[1]:

Տիգրանակերտի թանգարանը կազմված էր նախասրահից ու երկու ցուցասրահներից: Նախասրահում պայմաններ էին ստեղծված Տիգրանակերտին վերաբերող ֆիլմերի ցուցադրության համար, իսկ պատերի մեջ բացված խոր խորշերն օգտագործվել են Տիգրանակերտի շրջակայքից պատահաբար հայտնաբերված խեցանոթների ցուցադրության համար: Վերջին տարիներին այս սրահն օգտագործվում էր նաև ժամանակավոր ցուցադրությունների համար:

Տիգրանակերտին նվիրված բուն ցուցադրությունը ծավալվում է հաջորդ երկու հաղորդակցվող սրահներում, որոնցից առաջինը համարյա քառակուսի է, իսկ երկրորդը՝ ավելի նեղ ու ձգված: Ցուցադրական միջոցները ներկայացված են ապակեպատ խորշերով, պահարաններով, սեղաններով, բաց պատվանդաններով, ստենդերի համար նախատեսված ոտնակավոր ուղղահայաց վահանակներով և մոտ երկու մետր բարձրությամբ անցկացված հորիզոնական ձողաշարով:

Առաջին սրահն ավելի ներածական բնույթ ունի: Այստեղ հորիզոնական ձողաշարից կախված ստենդերի միջոցով ներկայացված էին քաղաքի հայտնագործման պատմությունը և Ամրացված թաղամասի և անտիկ դամբարանդաշտի պեղումները (նկ. 8, 9): Պատերի մեջ արված խոր խորշերում ցուցադրվում էին ամենաուշագրավ ամբողջական մի քանի անտիկ և միջնադարյան անոթներ, ապակե-

1 Թանգարանային ցուցադրության հայեցակարգը մշակել ու մանրամասն պլանը կազմել և ցուցադրությունը տեխնիկապես իրականացրել է արշավախումբը՝ ի դեմս նրա ղեկավար Համլետ Պետրոսյանի և ճարտարապետ Լյուբա Կիրակոսյանի:

ծածկ սեղանի վրա՝ քաղաքի անմիջական շրջապատում գտնված հնագիտական նյութերը, պահարաններում՝ պեղումների վերաբերյալ հրատարակությունները:

Երկրորդ սրահում (նկ.10, 11) ցուցադրությունը իրականացվում էր երեք ցուցադրական շարքերի օգնությամբ. ուղղաձիգ վահանակների վրա ամրացված ստենդերը տեքստային, գծագրական և լուսանկարչական նյութերի օգնությամբ ներկայացնում են Տիգրանակերտի պեղումների ընթացքը: Ապակյա կափարիչներով փակված ուղղանկյուն և քառակուսի սեղանների վրա ներկայացվում է համապատասխան պեղածո նյութը՝ գերազանցապես խեցեղեն, ապակի և քարե և ոսկրե մանր առարկաներ: Նյութը խիստ հարուստ էր, բազմազան՝ անտիկ գունազարդ և միջնադարյան ջնարակապատ խեցեղեն, վաղքրիստոնեական քարե խաչերի և խաչային հորինվածքների ապակյա անոթների և ապարանջանների բեկորներ, հայերեն արձանագրությամբ կավե սկավառակը: Երրորդ շարքում բաց սեղանների վրա դրված էին բազիլիկ եկեղեցու խոշոր ճարտարապետական դետալները՝ խարիսխ, սյուն, քանդակազարդ խոյակներ, քիվի բեկորներ:

Թանգարանը տարեկան ունենում էր մոտ երեսուն հազար այցելու. համեմատության համար նշենք, որ Հայաստանի ամենախոշոր և ամենաշատ այցելվող՝ Հայաստանի պատմության թանգարանը տարեկան ունենում է մոտ 40 հազար այցելու: Չնայած Արցախի Հանրապետությունը միջազգայնորեն ճանաչած պետություն չէ, և շատ երկրների կառավարություններ խորհուրդ չեն տալիս իրենց քաղաքացիներին այցելել Արցախ, թանգարանի այցելուների քսան տոկոսը արտասահմանցիներ և սփյուռքահայեր էին՝ որոնց մեջ շատ են հատկապես Շվեյցարիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Կանադայի և Ֆրանսիայի քաղաքացիները: Թանգարանի այցելուները իրենց տպավորություններով լրացրել են երեք ստվարածավալ հատորներ, իմ ուսանողուհի Անի Կոստանդյանը մի հատուկ հետազոտություն է արել այցելուների գրառումների վերաբերյալ, որով հավաստվում է, որ Տիգրանակերտը ոչ միայն նպաստում է Արցախի մշակութային ժառանգության հանրահռչակմանը միջազգային և ազգային առումով, այլև տեղաբնակների մեջ ամրապնդում է հպարտության զգացումը, նրանց ավելի կապում աշխարհագրական միջավայրին, դառնում այստեղ վերաբնակված մարդկանց սրբազան կենտրոնը:

Տարօրինակ բարդություններ: Այս ամենի ֆոնին ուղղակի հակամշակութային կարելի է համարել Ադրբեջանի պետական և ակադեմիական շրջանակների և լրատվամիջոցների վերաբերմունքը. դիմումներ միջազգային կառույցներին՝ արգելելու մեր պեղումները, արշավախմբին միջազգային մեկուսացման հասցնելու փորձեր, Արցախ այցելող օտարերկրացիների «սև ցուցակների» կազմում և այլն: Մշակութային քաղաքականությունը վերջին տասնամյակներում աշխարհում փոխում է իր հիմնական հասկացությունն ու նպատակային ընկալումը: Մարդու մշակութային իրավունքի և մշակութային դեմոկրատիայի ընկալումը՝ որպես մարդուն ուղղված քաղաքականություն, լայն տարածում են գտնում: Մարդու մշակույթի իրավունքներով, մշակութային ժառանգության խնդիրներով զբաղվող միջազգային ամենահզոր կառույցը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն սակայն ոչ միայն անտարբեր է այս ամենի հանդեպ, այլև ըստ էության պաշտպանում է Ադրբեջանին: ՅՈՒՆԵՍԿՕ-ն երկու

անգամ հրաժարվել է ընդունել կոնֆլիկտի գոտու և ի մասնավորի՝ Տիգրանակերտի շրջակայքի բոլոր հուշարձանները, ներառյալ և մահմեդական հուշարձանները, չեզոք, զուտ մասնագիտական ինտերնետային պորտալ ստեղծելու իմ նախագծերը՝ միայն մեկ պատճառաբանությամբ՝ այդ տարածքներին վերաբերող մշակութային ծրագրերը քննարկման չեն ընդունվում:

Այո, Արցախն այսօր միջազգայնորեն չճանաչված քաղաքական կազմավորում է: Բայց դա չի նշանակում է, թե Արցախի ժողովուրդը չունի մշակույթի իրավունք, մշակութային ժառանգության օգնությամբ սեփական ինքնությունը կայացնելու և ամրապնդելու իրավունք: Հենց Արցախում է, որ փորձ ենք արել մշակույթը դարձնել մարդու անկապտելի իրավունքը, նրա ինքնության կերտողն ու պահպանողը: Մարդիկ գալիս էին այստեղ՝ ամենևին նկատի չունենալով, թե միջազգային կառույցները ինչպիսի կեցվածք ունեն, կամ թե Ադրբեջանն ինչքանով էր ընդդիմանում այստեղ ընթացող մշակութային գործընթացներին:

44-օրյա պատերազմը և Տիգրանակերտի հնագիտական թանգարանի հավաքածուների տարհանումը: 44-օրյա պատերազմի ժամանակ Տիգրանակերտը դարձել էր թշնամու հրետակոծության տարածք, ինչի մասին մեկ անգամ չէ, որ ահազանգել ենք: Արդյունքում ամբողջովին ոչնչացվել է Տիգրանակերտի հնագիտական հանգրվանը: Արցախի իշխանությունները, ես և մեր հետազոտական թիմը չէինք կարող թույլ տալ, որ նման ճակատագրի արժանանա նաև Տիգրանակերտի հնագիտական թանգարանը: Թանգարանային հավաքածուները տարհանվել են և գտնվում են ապահով վայրում: Տիգրանակերտի պեղումների հնագիտական գտածոները Արցախի ժողովրդի սեփականությունն են, նրա պահպանության խնդիրները գտնվում են ոչ թե Բաքվի, այլ Ստեփանակերտի իշխանությունների իրավասության ոլորտում: Խաղաղ պայմանների դեպքում դրանք վերադարձվելու են Ստեփանակերտ և ցուցադրվելու են դրա համար ստեղծվելիք թանգարանում: Արցախի քաղաքականապես չճանաչված լինելը չի զրկում նրա բնիկ ժողովրդին մշակույթի իրավունքից: Այդ թվում և մշակութային ժառանգությունը հետազոտելու և հանրահռչակելու իրավունքից: Արցախի ժողովրդին իր մշակութային ժառանգությունից զրկելու ադրբեջանական մտավարժանքը հայ մշակութային ժառանգության գենոցիդի շարունակությունն է: Գենոցիդ, ինչի ականատեսն ենք եղել տասնամյակներ շարունակ, գենոցիդ, որի գագաթնակետը եղավ 2005-2006 թթ. Ջուղայի հազարավոր խաչքարերի ոչնչացումը, գենոցիդ՝ ինչն ավելի մեծ թափ է ստացել Ադրբեջանի և Թուրքիայի վերջին ագրեսիայի ժամանակ և շարունակվում է ամեն օր: Եվ այն չի կարող արդարացվել կեղծ քաղաքական հայտարարություններով ու շինծու մեղադրանքներով: Մենք հետայսու էլ շարունակելու ենք Արցախի մշակութային ժառանգության հետազոտությունը, հանրահռչակումն ու ադրբեջանական վանդալիզմի բացահայտումները: Ագրեսիան, ռազմական գերակայությունը, միջազգային ատյաններին ուղղված հոխորտանքներն իրավասու չեն և չեն կարող Արցախի ժողովրդին զրկել իր մշակութային ժառանգությամբ իր ինքնությունը պահպանելու իրավունքից

Hamlet Petrosyan
Doctor of Sciences in History, Professor

Yerevan State University
Institute of Archaeology and Ethnography

THE ODYSSEY OF THE TIGRANAKERT ARCHAEOLOGICAL MUSEUM OF ARTSAKH

Keywords: Archaeological collection, Tigranakert in Artsakh, excavation, museum, cultural heritage, cultural policy, 44-day war.

Archaeological research of Tigranakert in Artsakh is one of the most successful initiatives of the last decade to open, explore and popularize cultural heritage. After four years of excavations, in May 2010, the archaeological museum of Tigranakert was opened in the late medieval castle. It shows the visitors not only the rich findings of city culture, but also became the centre of numerous cultural events. The article presents the background of these cultural initiatives, the process, the exhibition and the activity of the archaeological museum of Tigranakert. The article discusses the difficulties and perspectives for research on cultural heritage in internationally unrecognized Republic of Artsakh, the fate of the museum and collections after the 44-day war.

Гамлет Петросян
Кандидат исторических наук, профессор

Ереванский государственный университет
Институт археологии и этнографии НАН РА

ОДИССЕЯ АРХЕОЛОГИЧЕСКОГО МУЗЕЯ АРЦАХСКОГО ТИГРАНАКЕРТА

Ключевые слова: Археологическая коллекция, Тигранакерт Арцаха, раскопки, музей, культурное наследие, культурная политика, 44-дневная война.

Археологическое исследование Арцахского Тигранакерта является самой удачной инициативой последнего десятилетия, направленной на открытие, исследование и популяризацию армянского культурного наследия. Спустя четыре года с раскопок, в мае 2010 года на месте позднесредневековой крепости был открыт Археологический музей Тигранакерта. Он не только представлял посетителям богатую археологическую культуру города, но и стал центром множества культурных мероприятий, проводившимся в арцахском и общеармянском масштабе. В статье представляется предыстория этой культурной инициативы, процесс становления, экспозиция и деятельность Археологического музея Тигранакерта. Рассматриваются трудности и перспективы исследования культурного наследия непризнанной на международном уровне Республики Арцах, судьба музея и коллекции после 44-дневной войны.

Համլետ Պետրոսյան

Արցախի Տիգրանակերտի հնագիտական թանգարանի ոդիսականը

Նկ. 1. Տիգրանակերտի Ամրացված թաղամասի ընդհանուր տեսքը

Նկ. 3. Հայտված անտիկ դամբարանադաշտից

Նկ. 4. Ջրանցքի առաջին թունելի պեղումները

Նկ.5. Ցիցսարի հուշարձանները

Նկ.6. Տիգրանակերտի հնագիտական թանգարանի շենքը

Նկ.7. Թանգարանի հանդիսավոր բացումը

Նկ.8. Հարված առաջին սրահից. կարասային թաղման նյութերը (Արևելյան դամբարանադաշտ, մ.թ.ա. 1-ին դար)

Նկ.9. Գունազարդ փափաշիշ՝ անտիկ դամբարանադաշտի պեղումներից

Նկ.10. Թանգարանի երկրորդ սրահը

Նկ.11. Վաղքրիստոնեական խաչերի բեկորներ և հայերեն արձանագրությամբ կավե սկավառակը: